ները» հին և նոր սեպհականատէրերուն միջև խնդիրներ երևան բերին և պաշտօնական դիմումներու դուռ բացին (Տե՛ս "Meistermann", la "Terre Sainte", 1925, էջ 33)։ Այդ կարգի հողերէն կը կարծուէին Հայոց Լեռնակողման վանքի սեպհականութիւնները և այդ պատճառաւ նեղութիւններու կ'ենթարկուէին տեղւոյն վանականները։ Ս. Աթոռոս դիւանական թղթոց մէջ կա՛յ Եգիպտոսի Սուլթան Մէլէք Սալիհի (1240-1250) մէկ հրովարտակը, որով կը թոյլատրուի հայ վանականաց, համաձայն արքունական հին հրամանագրերու, տիրանալ նոյն վանքին և տեղի չտալ ոտնձգութիւններու, և կ'արգելու դրացիներուն անիրաւ ընթացքը (Տե՛ս Ժիլկրկի. Պտմ. Երուսղ.ի, Հատ. Ա. էջ 184)։ Բայց կ'երևի թէ չատ քիչ ժամանակի համար, օգուտ մը ունեցաւ այս բարձրագոյն հրամանը, վասն զի, ինչպէս տեսանք ուխտաւոր ուղեգիրներու մանրամասն ծանօթագրութենէն, դրացիները չարունակած են իրենց ապօրէն պահանջները, վանքն ու եկեղեցին քանդելու, անբնակելի դարձնելու իրենց բոլոր յարձակումներով։ Հայ միաբանութիւնը ամէն գնով կը տոկար սակայն, և կը շարունակէր իր աշխատանքը. այնպէս կը տեսնուի որ տրուած նեղութիւններուն հակառակ, անխափան կը կատարուէին ժամասացութիւն, գրչագրական և գրական գրաղումներ, ինչպէս ցոյց կու տան յիշատակարանները, մեր այս տեսութեան ի վկայութիւն. հոս կը դնենք նոյն հատակոտոր յիշատակարանաց օրինակներ։ Այսպէս, Յովհաննիս աբեղայ մը. 1386 թուին, ձեռագիր մը կը նուիրէ «Լեռնակողման» վանքին. «. . . յիշեսջիք զվերջին զսացաւդ զովանիս աբեղայս, որ զգիրս զնեցի ի տէր Գրիգորէ որ ի Սսէ. եւ դարձեալ տուի ի լեռնակողմն ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց ի թուին ՊԼԵ» (Ձեռ. Թ. 89)։ Դարձեալ նոյն ձեռագրին մէջ, ուրիշ գրիչ մը, Ստեփանոս, 1390ին, կը գրէ. «Գրեցաւ սակաւ գիրս ի հոչակաւոր անապաս լեռնակողմանս, որ յանուն Սբ. Յովհաննիս Կարապետին, ՊԼԹ. Յուլիս Ժ. ձեռամբ Ստեփանոսի . . . Սբ. Երուսաղէմի Գրիգոր Մըսրցուն»։ Այս Ստեփանոս Սեբաստացին է որ 1390ին, նոյն վանքին մէջ, կ'ընդօրինակէ «Մաշտոց» մը. «Գրեցաւ սակաւ գիրս ի հոչակաւոր անապասս լեռնակողմանս որ յանուն Ս. Յովհաննիս Կարապետին ի թուին ՊԼԹ. ձեռամբ Ստեփանոսի, յեպիսկոպոսութեան Ս. Երուսաղէմի տէր Գրիգորի Մըսրցոյ», (Թ. 661)։ Դարձեալ նոյն գրչէն, 1392ին,